Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ

Edu Armenia նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2022

Հետազոտական աշխատանք

Թեմա՝

ԻՆՉՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ՍԵՐ ՈՒ ՀԱՐԳԱՆՔ ԱՐԹՆԱՑՆԵԼ ԳՐՔԻ և ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Հետազոտող ուսուցիչ՝ Կարինե Ստեփանյան
Հրազդանի Վ.Սարոյանի անվան թիվ 11 հիմնական դպրոցի
<<Հայոց լեզու և գրականություն>> առարկայի ուսուցչուհի

Բովանդակություն

Ներածություն 3

Ինչպես կազմակերպել ընթերցանությունը.....5

Բանավեճը որպես ընթերցանությունը խթանելու և բանավոր խոսքը զարգացնելու միջոց..... .11

Տնային ընթերցանությունը որպես ընթերցանության մեթոդ.....13

Ընթերցանությունը զարգացնող օրինակներ արտասահմանյան փորձառությունից.....14

Իմ փորձառությունից օրինակներ 21

Եզրակացություն.....22

Օգտագործած գրականություն 24

Ներածություն

Աշխարհն արագորեն փոխվում է, դառնում ավելի ու ավելի վիրտուալ, որը պահանջ է դնում փոփոխել և գտնել ընթերցանության խթանման նոր ձևեր ու մեթոդներ, քանի որ ժամանակակից զարգացող հասարակության մեջ դժվարանում է երեխային ստիպել գիրք կարդալ, իսկ գիրք կարդալով զարգանալը անձի զարգացման գործընթացում մնում է անփոխարինելի:

Անգլիական վերածննդի ականավոր դրամատուրգ, քաղաքագետ և բանաստեղծ Ջոզեֆ Ադիսոնն ասել է. <<Ընթերցանությունը մտքի համար նույնն է, ինչ ֆիզիկական վարժությունը՝ մարմնի>>: [1]

Այն մարդը, ով մերժում է ընթերցանության արժեքը կամ չի սիրում ընթերցել, ինքն իրեն զրկում է իրականության խոր ընկալման գայթակղությունից:

Ընթերցանության՝ հաղորդակցական-ճանաչողական գործունեության դերը դժվար է գերագնահատել հասարակության արդի փուլում: Չնայած մեդիա կրթությունը թափ է առնում, բայց հենց նաև դրա արդյունքում ընթերցանությունը շարունակում է մնալ տեղեկատվության ձեռքբերման ամենալիարժեք աղբյուրը:

Սովորողների կրթության ու դաստիարակության հիմնական ուղղություններից մեկը ընթերցանության ուսուցումն է: Բայց պետք է նաև խոստովանել, որ առարկայական չափորոշիչներում ու ծրագրերում ներկայացված պահանջներն ամբողջությամբ չեն արտացոլում ընթերցանության առանձին տեսակների և դրանց առանձնահատկությունների ուսուցման խնդիրները: Այսպես՝ առարկայական ծրագրերում նախանշված են ընթերցանության նախապայմանները, նպատակները և ընթերցելը ստուգելու միջոցները, առավելագույնս՝ միայն ավանդական միջոցները, բայց գրեթե չկան ընթերցանության առանձին տեսակների ուսուցման առանձնահատկությունները:

Մեր խորին համոզմամբ՝ առարկայական ծրագրերում և չափորոշիչներում պետք է տեղ հատկացնել ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ուսուցման և ստուգման ռազմավարական նկարագրությանը:

[1] Վ. Վորոնցով, Բանականության սիմֆոնիա, Երևան՝ 1981 թ., էջ 297:

Մեր աշխատանքային փորձը ցույց է տալիս, որ սովորողների զգալի մասի մոտ ընթերցվող նյութերի ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող կարողություններն ու հմտությունները զարգացած չեն բավարար մակարդակով:

Մինչդեռ առարկայական ծրագրերն ու դասավանդման մեթոդիկան պետք է ենթադրեն, որ սովորողի մեջ կարդալու, գիրք ընտրելու կարողությունը շատ նուրբ արվեստ է և ճկուն գործընթաց, քանի որ փորձում են նրա մտածողությունն ուղղորդել, նրա մեջ ճաշակ ձևավորել, անհատականություն մշակել և կերտել:

Հատկապես անչափ դժվար խնդիրը դպրոցի կրտսեր օղակում է, երբ փորձում ես խրախուսման մեթոդով նրանց մեջ սեր ու հարգանք արթնացնել գրքի և ընթերցանության նկատմամբ, որի բացակայության դեպքում խնդիրն էլ ավելի է բարդանում միջին օղակում, հատկապես 7-9-րդ դասարաններում: Տարիների իմ փորձը ցույց է տալիս, որ նշված դասարաններում սովորողների միայն 20%-ն է ընթերցում պահանջված գրականությունը:

Ընթերցանությունը՝ որպես լեզվական-հաղորդակցական իրազեկության կարևոր ճանաչողական բաղադրիչ, ենթադրում է ոչ միայն գիտելիքների հանրագումար, այլ նաև գիտելիքները ինքնուրույն լրացնելու, ընդլայնելու, համապատասխան տեղեկատվությունը դուրս բերելու և տեքստի բովանդակության ստուգումն իրականացնելու կարողությունների ձևավորում: Կարծում ենք, որ ընթերցանության բովանդակության ստուգման ավանդական ձևերի կողքին լայնորեն պետք է կիրառվեն նաև այլընտրանքային տեխնոլոգիաներ, հատկապես թեստային համակարգը: Դա ենթադրում է ինքնաստուգման միջոցով հասկանալ ընթերցածի բովանդակությունը: Սակայն պետք է ասել, որ թեստերը ոչ թե ուղղված են ստուգման ավանդական ձևերի փոխարինելուն, այլ դրանք լրացնելուն:

Վերը նշվածներից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ մեր այս հետազոտության հիմնահարցը ընթերցանության դասավանդման մեթոդիկայի ասպարեզում ուսումնական խնդիրներին նորովի մոտեցումն է:

<u>Հետազոտության նպատակը</u> ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության կարողությունների ուսուցման ռազմավարության մշակումն է, որպես ընթերցավար օգնել սովորողին մոտենալ իր աշխարհին, կապել նրան ժամանակի հետ և կտրել նույն ժամանակից, սովորողի խոսքը դարձնել ճիշտ, գրագետ, սահուն և արտահայտիչ:

<u>Հետազոտության օբյեկտն</u> է ընթերցանության՝ որպես ընկալողական խոսքային գործունեության ընթացքում բովանդակության ըմբռնման ստուգման հիմնահարցը:

<u>Հետազոտության առարկան</u> է ընդհանուր բովանդակության ընկալման նպատակով ընթերցանության բովանդակության ստուգման ռազմավարությունը:

<u>Հետազոտության խնդիրներն են</u>՝

- Ընթերցանության բնագավառին առնչվող հոգեբանամանկավարժական և մեթոդական գրականության վերլուծում
- Ծանոթացնող ընթերցանության առանձնահատկությունների բացահայտում
- Ընթերցվող նյութերի բովանդակության ստուգման մեթոդական համակարգի մշակում
- Տեքստի ընկալման մակարդակը ստուգելու նպատակով ընթերցանության թեստի իրականացում

<u>Հետազոտության մեթոդական հիմքը</u> ուսուցման անձնական մոտեցումն է, ըստ որի պետք է հաշվի առնել սովորողի անհատական հոգեբանական, տարիքային առանձնահատկությունները և ձևավորելով նրա ինքնավարության, ինքնակառավարման և ինքնաստուգման կարողությունը՝ տարբեր միջոցներով՝ ուսուցման ժամանակակից նոր մեթոդների, ընթերցանության խթանման արտասահմանյան երկրների լավագույն փորձի կիրառմամբ, խրախուսել սովորողին ընթերցել, զարգացնել նրա երևակայական մտածողությունը, կարողանալ շեղել նրան բնականոն ընթացքից, ստանդարտ կերպարներից և նորի մեջ կարողանալ լավ մշակված հինը կերտել:

§1 ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ընթերցանության ուսուցման արդյունավետությունից և որակից է կախված արդյունքը:

Մենք արդեն նշել ենք, որ ընթերցանության միջոցով կարելի է ձևավորել գրական ճաշակ, ուսուցանվող նյութի բովանդակության ենթաիմաստի ըմբռնում, երևակայություն և լեզվամտածողության զարգացում:

Այս ամենը կարևոր ու շատ, բայց հարցի ամենակարևոր կողմը այն է,թե ինչպես կարելի է սովորողին դարձնել ընթերցասեր:

Անգլիացի գրող Այդան Չեմբերսը դպրոցում երկար տարիներ աշխատել է որպես ուսուցիչ: Հետաքրքիր են նրա ,,Պատմել,, և ,,Ընթերցանություն,, աշխատությունները, որոնց մեջ ուսուցիչ-գրողը ձգտում է իր բազմամյա մանկավարժական փորձի միջոցով վեր հանել այդ հիմնախնդիրը և ցույց տալ այն ուղիներն ու եղանակները, որոնց միջոցով երեխային հնարավոր կլինի դարձնել ընթերցասեր:

Ընթերցանության ճիշտ, հետաքրքիր ու արդյունավետ կազմակերպելու համար նա կարևոր է համարում հետևյալ հիմնահարցերը.

1.Թողնել, որ սովորողը ինքնուրույն որոշի ընթերցվող գրքի ընտրությունը՝ հարգելով սովորողի իրավունքը:

2.Ուսուցիչը չի կարող գնահատել, ընտրել և գտնել այնպիսի գիրք, որը ճշգրտորեն համապատասխանի սովորողի մտավոր և հուզական կարիքներին;

3.Ճիշտ չէ ընթերցելը հանձնարարել միայն տանը, այսինքն՝ մատնել ինքնահոսի, որովհետև ամեն ընտանիք չէ, որտեղ կարդալը կենսակերպի մաս, քանի որ հեռուստացույցը, համացանցը, մանավանդ համակարգչային խաղերը կրճատում են երեխայի ցանկությունը՝ մտածված ընթերցանության սովորություն ձեռք բերելու համար, ու հատկապես այն ընտանիքներում, որտեղ նախկինում էլ շատ չեն կարդացել կամ կարդալը հարգի չէր:(Ակամայից հիշեցի հինգերորդ դասարանի իմ աշակերտին,ով մի անգամ ընտանիքում ընթերցանության կարևորության մասին իմ խոսքից հետո ասաց.<<Տիկի՛ն Ստեփանյան, իմ ծնողները ինձ միշտ հորդորում են գիրք կարդալ, բայց ես երբևէ չեմ տեսել նրանց գիրք կարդալիս>>:)

4. Ուսուցիչը պետք է զերծ մնա ընտրած գրքի կամ նյութի վերաբերյալ գնահատականներ տալուց, իսկ եթե այդ դեպքում ուսուցչի հետ սովորողը ունենա տարաձայնություններ, ապա սովորողը կարող է կորցնել ընթերցանության նկատմամբ բոլոր ցանկությունները:

5.Ուսուցիչը կարիք չունի կարդալու այն բոլոր գրքերը, ինչ ընտրել է իր աշակերտը;

6. Եթե սովորողը ընտրում է ցածրորակ նյութեր կամ գրքեր, ապա ուսուցիչը պիտի հաշվի առնի և հարցը լուծի դպրոցից դուրս:

7. Ուսուցիչը պետք է թողնի, որ սովորողը գրքի ընտրության որոշումները ինքնուրույն կայացնի: Նման պարագայում սովորողը ավելի արագ կկայանա, քան այն ժամանակ,երբ ուսուցիչը ինքն է գիրք ընտրում և որոշում, թե որն է լավը, և որը՝ վատը:

Այսպիսով՝ վերոնշյալ առաջարկությունները և հնարքները հիմք ընդունելով՝ մեր խորին համոզմամբ և մանկավարժական փորձով կարելի է սովորողների մոտ սեր արթնացնել ընթերցանության նկատմամբ, որ սովորողները իրենց մանկության և

պատանեկության տարիներին ավելի շատ ընթերցանությամբ զբաղվեն, և նրանցից կձևավորվի իսկական ընթերցող:

Հրաշալի կլինի, երբ երեխան դասերից հետո ժամանակ գտնի ինքնուրույն ընթերցանության համար: Ցավոք սրտի սովորողները ինքնուրույն ընթերցելու ժամանակ են ունենում միայն դպրոցական արձակուրդների օրերին:

Փորձը ցույց է տալիս, որ սովորողը ընթերցանությամբ կարող է զբաղվել այնքան ժամանակ, որքան պահում է ուշադրությունը և հետաքրքրությունը, իսկ ընթերցանության ժամանակը կախված է մի շարք գործոններից: Տարիների իմ աշխատանքային փորձը վկայում է, որ կրտսեր տարիքի սովորողները, ի տարբերություն ավագների, չեն կարող ուշադրությունը կենտրոնացված ու երկար պահել: Ավելի շատ ակտիվ են հատկապես այն աշակերտները, ովքեր մեծացել են ընթերցասեր ընտանիքում: Իմ սեփական օրինակն էլ դրա վկայությունն է. ես սիրել ու սիրում եմ ընթերցել, ու դա ինձ փոխանցվել է իմ ծնողներից, ովքեր եղել են չափազանց ընթերցասեր, որն էլ փոխանցվել է իմ երեխաներին և թոռներին:

Ընթերցասեր ընտանիքի երեխաները փաստորեն սովորաբար իրենք են իրենց հանձնարարում ընթերցել այս կամ այն գիրքը. նրանք ավելի նպատակասլաց են, քան իրենց հասակակիցները, ովքեր չկարդացած ընտանիքներից են: Լավ հագեցած, լուսավորված դասասենյակներում սովորողը կարդում է ավելի երկար, քան այն սովորողները, ում բախտը չի բերել դասասենյակի կամ ուսուցչի հարցում: Լավ արդյունքների սպասել հին ուսուցչին փոխարինող նոր ուսուցչից, ով փորձում է ընթերցել չսիրող սովորողներին ընթերցել սովորեցնել, որի համար ժամանակ է պետք,ճիշտ չէ:

Փորձը ցույց է տալիս, որ ընթերցանության առաջին դասին բարձրաձայն ինչ-որ բան ընթերցելը հնարավորություն է տալիս ուսուցչին հեշտությամբ համախմբել սովորողներին:

Ինքնուրույն ընթերցանության համար անհրաժեշտ է, որ երեխան բարձրաձայն կարդա նախապես ընտրված նյութը, իսկ երբ նրանց մոտ ձևավորվի ինքնուրույն կարդալու սովորույթ, բարձրաձայն կարդալու պահանջը այլևս դառնում է երկրորդական: Պետք է ընթերցանության դասաժամերին, որը դպրոցներում անտեսված է կամ հստակորեն դասացուցակներում ֆիքսված չեն, ուշադրություն դարձնել լուռ ընթերցանությանը, ու ստեղծվեն այնպիսի պայմաններ, որ ոչինչ չխանգարի այդ լռությանը: Անգամ ուսուցիչը չպետք է հետևի, ստուգի, թե ինչպես են սովորողները աշխատում, ուսուցիչը նույնիսկ չպետք է շրջի դասասենյակում, չպետք է զբաղվի այլ գործերով: Նա նույնպես պետք է զբաղվի լուռ ընթերցանությամբ:

Իհարկե, լուռ ընթերցելը լավ է, բայց տարիքային առանձնահատկությունները հաճախ դա անտեսում են:Այսպես՝ տարիքով փոքրերը հաճախ ծիծաղելով ընթերցում են նյութը՝ իրար ցույց տալով ինչ-որ հետաքրքիր բան, իրար հուշում, թե ինչ է լինելու հերոսի հետ մի քանի էջ հետո, կա ինչ ավարտ է ունենալու ընթերցվող նյութը: Նման դեպքերում, կարծում եմ, չի կարելի նրանցից պահանջել լիակատար լռություն, քանի որ կվտանգվի գիրք կարդալու նրանց ցանկությունը: Դա պարզ երևում էր, երբ ընթերցանության դասերն անցկացնում էի տարբեր տարիքի սովորողների հետ: Կրտսեր տարիքի սովորողները մի քիչ ,,չարաճճի,, են, ու այդ դեպքում բացարձակ անտարբերությունն էլ չի երաշխավորվում: Նրանց կողմից ,,չափն անցնելու,, դեպքում կարելի է սաստել դեմքի արտահայտությամբ կամ մատի շարժումով: <<Ընթերցանության ժամերին այդ դասարաններում առաջին դասերն անցնում էին հետաքրքիր. փոքրիկների ուշադրությունն անմիջապես գրավում էին նկարչական գրքերը, և նրանցից շատերը այնքան արագ էին թերթում գրքի էջերը, որ մի քանի րոպեից նրանց սերը վերածվում է գրքի նկատմամբ պահանջի: Ու նրանք չէին ցանկանում կիսել իրենց անձնական հավաքածուն, բայց ես կարծում եմ, որ երեխաների նման պահվածքը արդարացված է , քանզի նրանք պետք է սովորեն ընտրել, կարդալ, լինել գրքերի աշխարհում, և հետո միայն գիտակցեն կարդալը որպես սոցիալական նշանակություն ունեցող գործունեություն: Երբ երեխայի մոտ առաջանում է կարդալու ցանկություն, նա շատ արագ սկսում է հետաքրքրվել գրքերով, որից հետագայում նա միայն կշահի>>,- գրել է Օքսֆորդի տարրական դասարանների ուսուցիչ Հովարդ Բիգալը:

Ելնելով վերոշարադրյալից՝ կարևոր եմ համարում առանձնացնել նպատակային ընթերցանության չորս գլխավոր նախադրյալներ.

1. ընթերցանության ժամը պետք է լինի անփոփոխ.
2. լավ ընտրված գրականություն.
3. բարձրաձայն ընթերցում.
4. ուսուցչի հսկողության ներքո կարդացածի քննարկում և թեստավորում:

Ի դեպ, ընթերցանության որակը կարելի է գնահատել, եթե դասերն անկախ են, այլ ոչ թե արվում են ինչ-որ ժամերի հաշվին:

Պիտի ենթադրել, որ ընթերցանության դասը սովորական դասապրոցես է, և սովորողը չպիտի հանդես գա պասիվության դիրքերից, ընդհակառակը, սովորողը պիտի լինի դասապրոցեսի ակտիվ մասնակից: Հավելենք, որ նույն նյութի միապաղաղ և բազմակի ընթերցումները ոչինչ չեն տալիս ու չեն էլ կարող տալ: Դեռ ավելին՝ սովորողի մոտ ձևավորվում է բացասական վերաբերմունք դեպի ընթերցանությունը,

որն էլ կարող է սովորողի մոտ վերածվել գրքի նկատմամբ արհամարհական վերաբերմունքի: Հաճախ դասապրոցեսի ժամանակ նյութի մի քանի անգամ ընթերցումը այն դարձնում է ձանձրալի և անհետաքրքիր: Դրանից խուսափելու համար հաճախ կիրառում ենք <<Ուղղորդված ընթերցանություն>> մեթոդը, որը հնարավորություն է տալիս նյութը մեկ անգամ ուշադրությամբ ընթերցելուց հետո ընթերցել նյութի այն հատվածները, որոնք ուղղորդվում են ուսուցչի կողմից: Նման դեպքերում նպատակահարմար է կիրառել նաև <<Երեք բանալի, մեկ կողպեք մեթոդը>>: Խմբերով նստած աշակերտներին հանձնարարվում է անհատական աշխատանք. ուշադիր կարդալ նյութը և ընտրել երեք արտահայտություն կամ նախադասություն, որոնք կարևոր են դասանյութը յուրացնելու համար: Դրանք համարվում են դասի բանալիները: Հանձնարարվում է նաև ընտրել մեկ նախադասություն, որն ամփոփում է ամբողջ նյութը. դա նյութի կողպեքն է: Բնականաբար տարբեր աշակերտներ կընտրեն տարբեր բանալիներ և կողպեք: Այնուհետև նրանց հնարավորություն է տրվում իրենց առանձնացրած բանալիները և կողպեքը համեմատելու իրենց զուգընկերոջ ընտրածի հետ և գտնելու երկուսի համար ընդունելի տարբերակ: Նույն աշխատանքը հանձնարարվում է կատարել խմբով: Խմբում տարակարծության առկայության դեպքում ընտրվում է ավելի հիմնավորված տարբերակը: Խմբային աշխատանքից հետո յուրաքանչյուր խմբից մեկը ներկայացնում է խմբի կողմից ընտրված բանալիները և կողպեքը ու միաժամանակ հիմնավորում իրենց ընտրությունը: Կարող են լինել նաև սովորողներ, որոնք համաձայն չեն լինի խմբերի ներկայացրած բանալիներին և կողպեքին, նրանց նույնպես պետք է հնարավորություն տալ արտահայտելու սեփական կարծիքը: Ոչ մի սովորողի կարծիք ուշադրությունից դուրս չպետք է մնա:

Այս մեթոդով աշխատելիս սովորողների մեջ ձևավորվում է ընտրություն կա տարելու, ընտրությունը հիմնավորելու, գլխավորը երկրորդականից տարբերելու, համագործակցելու կարողություններ և հմտություններ:
<<Երեք բանալի, մեկ կողպեք>> մեթոդը կիրառելի է հատկապես ծավալում դասանյութի դեպքում:
Ընթերցանության գործընթացը ճիշտ և արդյունավետ կազմակերպելու համար առաջարկում ենք ընթերցանության կազմակերպման մի քանի եղանակներ, որոնց ընթացքում, ըստ իս և իմ մանկավարժական փորձառության, ապահովվում են սովորողի ակտիվ մասնակցությունը, հետաքրքրվածությունն ու

հետաքրքրասիրությունը, մարդկանց և աշխարհի նկատմամբ մտածական ընկալումների խթանումը:

Նախ՝ ընթերցանության արդյունավետության կարևորագույն բաղադրիչներց մեկը **ճիշտ ընթերցանությունն է**: Կա ընթերցանության երեք տեսակ. առաջին՝ կարդալ և չհասկանալ, երկրորդ՝ կարդալ և հասկանալ, երրորդ՝ կարդալ և հասկանալ այն, ինչ գրված չէ: Այդ չգրվածի խորհուրդը պետք է աշակերտը գտնի, հայտնաբերի: Իսկ Կ.Ֆեդինը այդ մասին գրել է. <<Գիրք աչքի անցկացնելը, թերթելը ընթերցանություն չէ: Հարկավոր է ընթերցել այնպես, ինչպես լսում ես մարդու խոստովանությունը, խորանալ գրքի մեջ: Այն ժամանակ նա կբացահայտի իրեն, և դու հասու կլինես դրա հրապույրին>>[2] : Հաճախ ընթերցվող նյութի սյուժետային զարգացման հետաքրքրությունն այնքան մեծ է լինում, որ սովորողը տեքստը ընթերցում է արագացված կերպով, թռիչքաձև շրջանցումներով, բացթողումներով, որպեսզի մոտենա ավարտին և հագուրդ տա իր հետաքրքրասիրությանը: Այսինքն՝ կարդում է տեքստի այն հատվածները, որտեղ կա սյուժեի արագ զարգացում՝ աչքից հեռու թողնելով սյուժեն լրացնող մյուս մանրամասնությունները՝ բնության նկարագրությունները, խոհափիլիսոփայական մտորումները, կերպարների բացահայտման հոգեբանական հնարքները, բանաստեղծական տողերը և այլն:

Պետք է խոստովանել,որ ընթերցանության այս եղանակը երբեք չի կարող արդյունավետ լինել: Ընդհակառակը,ուսուցիչը պետք է կարողանա հասկացնել սովորողին,որ այդ մանրամասնությունները բացահայտում են մարդու կերպարի զանազան կողմերը՝ սկսած հոգեբանությունից մինչև փիլիսոփայական խոհը, ընթերցողին ,,ստիպում են" վայելել բնության գեղեցկությունները, ձևավորում սովորողի ճաշակը, որ ընթերցելիս յուրաքանչյուր հետաքրքիր միտք կամ նկարագրություն պետք է մտորելու առիթ դառնա ընթերցողի մոտ:

,,Ընթերցողները երբեմն գրքից կտրվում են միանգամայն վերափոխված: Ե՛վ ամենահպարտ մտքերը, և՛ ամենաքնքուշները,և՛ ամենանրբանկատները, և ամենահստակները, և՛ ամենամեծերը ենթարկում են այդ թովչանքին,,-գրել է Վիկտոր Հյուգոն:[3]

Ընթերցանության ժամանակ սովորողը նշումներ կատարելը պետք է իր համար սովորություն դարձնի, քանի որ այդ նշումները կամա թե ակամա դառնում են սովորողի լեզվամտածողության զարգացման ատաղձ:

---

[2] Վ. Վորոնցով, Բանականության սիմֆոնիա, Երևան՝ 1981 թ., էջ 314:
[3] Վ. Վորոնցով, Բանականության սիմֆոնիա, Երևան՝ 1981 թ., էջ 299:

Նշումներ կատարելու միջոցով սովորողը մտովի դառնում է գրողի մտահղացումները թղթին հանձնելու գործողություններին մասնակից, հայտնաբերում գրողի գործածած բառապաշարի շերտերը և երբեմն բանավոր կամ գրավոր խոսքերում դրանք օգտագործում. ընդ որում ոչ միայն բառապաշարը, այլև գեղարվեստական հնարքները, պատկերներն ու նկարագրությունները:

,,Ընթերցելով դու պետք է ամեն ինչ հիմնավորես, կշռադատես,որպեսզի ընթերցածդ դառնա միս ու արյուն, այլ ոչ թե մտնի հիշողությանդ մեջ ինչպես որևէ բառարանի մեջ,,-ասել է Էրազմ Ռոտերդամցին:

Տեքստերից դուրս գրած գեղեցիկ մտքերն ու մտորումները, խոհերն ու դատողությունները սովորողի մտապատներներում և բառապաշարում ամրապնդելու նպատակով պետք է սովորողին խորհուրդ տալ տեքստը նորից ընթերցել, ավելի ուշադիր ընթերցել, որպեսզի դրանք վերածվեն կայուն իմացության և մտածողության, բառաշերտի ու հիշողության: Նման ընթերցումից հետո սովորողի բանավոր խոսքը կենթարկվի որոշակի, բայց իմացական փոփոխության: Այն կհամեմվի գրողի օգտագործած գեղեցիկ բառերով ու բառակապակցություններով, բառաստեղծման լայն ու հետաքրքիր հնարքներով, խոսքը կդառնա դատողական,խոհուն ու գեղեցիկ:

Ընթերցանության նման եղանակը կօգնի զարգացնելու սովորողի վերացական-համադրական խոսքը,գեղագիտական ըմբռնումը, և սովորողը տեքստի ընթերցումից հետո կկարողանա կատարել ինքնուրույն վերլուծություններ,եզրահանգումներ:

Այստեղ կարևոր է,որ դասավանդող ուսուցիչը սովորողին հրամցնի ընթերցվող նյութի վերլուծման պատրաստի եղանակներ, օգնի նրան նյութի շրջանակներում կատարել սեփական դատողություններ ու սեփական վերլուծություններ,փնտրել և գտնել հերոսների ներաշխարհի նրբությունները և մտնել այդ աշխարհը: Սովորողին պետք է թույլատրել,որ գրական երկի հիմքում դնի ընթերցած նյութից ստացած իր տպավորությունները,իր բացահայտումները,իր խոհերն ու հոգեբանական ապրումները համադրման սկզբունքով: Իսկ եթե սովորողի տպավորություններն ու հոգեբանական ապրումները չեն համընկնում ընթերցած նյութի գաղափարին, կերպարի ընկալումների հետ,ուսուցիչը պատավոր է շատ նրբորեն սովորողին բացատրի երևույթի կամ կերպարի մեկնության ճիշտ չափանիշներն այնպես,որ սովորողը դրանից չվիրավորվի,որ հարգվի նաև սովորողի ինքնուրույն մտածելու, համադրելու, խորհելու փորձերը: Չպետք է սովորողից պահանջել կրկնել ընթերցվող նյութի նույնական բառապաշարը,պատկերներն ու հոգեբանական ընկալումները,դասագրքային կամ գիտական մեկնաբանություններն ու կարծիքները, ինչպես դա արվում է հաճախակի:

Սովորողը պետք է իր արտահայտած կարծիքներում ու մեկնաբանություններում լինի ազատ ու անկաշկանդ:

Իհարկե, չպետք է կարծել, որ դասարանի բոլոր սովորողները պետք է կամ կարող են ունենալ նյութի ընկալման նույն մտածելակերպը: Նրանցից յուրաքանչյուրը անհատակություն է, և պարզ է,որ ընկալման և գնահատման նույն չափանիշը ունենալ չեն կարող: Նրանցից ամեն մեկն ունի իր աշխարհայացքը, իր դատողությունն ու աշխարհընկալումը:

Ուսուցիչը պարտավոր է, այս ամենը հաշվի առնելով, օգնել սովորողներին,որ նրանցից ամեն մեկը ընթերցած տեքստից ստացած իր անմիջական տպավորությունները և եզրահանգումները դրսևորի յուրովի, իր տեսանկյունից և բանավիճելու սկզբունքով, որպեսզի հնարավոր լինի ճիշտ ուղղումներ ու ուղղորդումներ կատարվեն նրա պատկերացումներում ու մտածելակերպում, դատողություններում ու խոհերում:

§2 Բանավեճը որպես ընթերցանությունը խթանելու և բանավոր խոսքը զարգացնելու միջոց

Ընթերցանության աշխատանքներն այնպես պետք է կազմակերպել, որ սովորողը լիարժեք հետաքրքրությամբ լցվի ընթերցվող նյութի կամ գրքի նկատմամբ: Չի կարելի առանց հաշվի առնելու սովորողների ունակություններն ու կարողությունները՝ հանձնարարել նրանց կարդալ առաջարկվող կոնկրետ գեղարվեստական գրքեր կամ նյութեր: Նման մոտեցումները ոչ ճիշտ են և կարող են հիասթափեցնել, հուսահատեցնել սկսնակ ընթերցողին: Այլ կերպ՝ սովորողը կմատնվի անտարբերության՝ ընթերցել սովորելու հանդեպ կորցնելով իր հետաքրքրասիրությունը:

Կարևոր , որ ուսուցիչը ոչ միայն կազմակերպի ընթերցանության գործընթացը, այլ սկզբնական փուլում իրեն պատասխանատու զգա սովորողներին օգնելու և ուղղորդելու գործում: <<Երեխայի կրթական ջերմաստիճանը պետք է պահպանել խելամիտ չափի սահմաններում, հակառակ դեպքում կարող են խաթարվել ուսման նկատմամբ սովորողի սերը ու ձգտումը, ֆիզիկական և հոգևոր համաչափ զարգացումը>>,-գրել է ականավոր հոգեբան Վիգոցսկին:

Բանն այն է,որ ուսուցիչների գերակշռող մասը այս շատ կարևոր խնդիրը լուծելի չի համարում և չի էլ փորձում խորանալ սկզբնական շրջանում դժվարին, հետո արդեն հեշտ ու հաճելի աշխատանքի մեջ: Այս դեպքում ևս ուսուցիչները համամիտ են

ծնողների այն կարծիքին, ըստ որի՝ եթե ապահովվի միայն գեղարվեստական գրականությունը, ուրեմն կլուծվի ներկայացվող խնդիրը: Բայց դա այդպես չէ, դա միայն արտաքին կարգավորումն է, իսկ բուն հիմնահարցը, որը երեխայի ներսումն է, ներքին հակասությունն է արտաքին պահանջների նկատմամբ մնում է անլուծելի, որը և կարող է հիմք հանդիսանալ հետագայում սովորողի մոտ ընթերցանության նկատմամբ հետաքրքրության նվազմանը:

Խնդիրն այն է, որ կազմակերպվող աշխատանքներում պետք է կարողանալ հետաքրքրել երեխաներին սովորեցնել կարդալ, այն էլ ճիշտ, և ընկալել պատմությունը տարբեր տեսանկյունից: Անհրաժեշտ է վստահություն սերմանել սովորողի մեջ իր իսկ ուժերի նկատմամբ և կամաց-կամաց նրանց մղել ինքնուրույն աշխատանքի:

Սովորողին ընթերցել սովորեցնելու համար կարևոր է առաջարկել ոչ միայն դասագրքերի նյութերը, այլև անծանոթ տեքստեր:

Շատ կարևոր է նաև, որ ուսուցիչը հնարավորություն տա սովորողներին միմյանց հարցեր ուղղել, վերլուծել ու համադրել, հանգել ինքնուրույն եզրակացության, արտահայտեն իրենց անձնական կարծեքները: Նմանատիպ աշխատանքներում արժևորում է բանավեճի մեթոդը, որի ճիշտ կազմակերպումը պայմանավորված է ճիշտ հարցադրումներով: Հարցերի քննարկումը պետք է ծառայեն խթանելու նպատակին : Ճիշտ հարցադրումները խիստ կարևորվում են ուսուցման ողջ ընթացքում: Դրանց կիրառումը առանձնակի հետաքրքրություն ու ակտիվություն է առաջացնում հատկապես ընթերցել սիրող սովորողների մեջ: Քննարկումների ընթացքում սովորողները փորձում են կառուցել լուրջ իմաստավորված գաղափարներ, նույնիսկ ստեղծել նոր գաղափարներ, անել եզրահանգումներ և ինքնուրույն վերլուծություններ:

<<Բանավեճը մտքի պարզաբանման արտակարգ միջոց է >>,-ասել է Ֆ.Դաստոևսկին:

Արտադասարանական ընթերցանության ժամերին արդյունավետ կազմակերպող ընթերցած գրական նյութից բխող գեղագիտական, դաստիարակչական տարբեր հարցերի վերաբերող բանավեճերը լուրջ դեր կարող են խաղալ սովորողի ինքնուրույն քննադատական մտածողության, ստեղծագործական կարողությունների զարգացման համար:

Ճիշտ և խելացի կազմակերպվող բանավեճերը նպաստում են սովորողի խոհափիլիսոփայական մտքի զարգացմանը, սովորողները կարողանում են հոգեբանական բարդ անցումների մեկնողական վերլուծություններ կատարել և ընդհանուր եզրահանգումների գալ: Սովորողը կարողանում է կյանքի շատ երևույթներ,

մարդկային հարաբերություններում շատ արժեքներ իմաստավորել և ձևավորել որպես անհատականություն:

Բանավեճերի ընթացքում ուսուցիչը պետք է կարողանա հղկել աշակերտի բանավոր խոսքը, շեշտադրի խոսքին ներկայացնող ամենակարևոր պահանջները՝ գաղափարի խորություն, մտքի հարստություն, ինքնատիպություն, արտահայտման եղանակների բազմազանություն, հակիրճություն:

§3 Տնային ընթերցանությունը որպես ընթերցանության մեթոդ

Որպես ուսուցման մեթոդ՝ տնային ընթերցանությունը նորություն չէ: Այդ մեթոդը կիրառվել ու կիրառվում է կրթական տարբեր մակարդակներում: Մեթոդի առավելությունն այն է, որ այն հնարավոր է օգտագործել սովորողի տառաճանաչ դառնալուց հետո , երբ սովորողը արդեն կարողանում է ընթերցել: Յուրաքանչյուր կրթական մակարդակի համար կարևորվում է ընտրել իրեն համապատասխան ընթերցման նյութը: Տնային ընթերցանությունը ուսուցման կազմակերպման գործընթացում հայկական դպրոցներում դարձել է նաև տնային աշխատանքի այլընտրանք-լրացուցիչ կրթություն: Մենք արդեն շեշտել ենք այն մասին,որ մեր ժամանակներում երեխաների մեծ մասը չի սիրում ընթերցել: Արդարածված, թե չարդարացված են դիտարկված պատճառները, դա այլ հարց է,որի մասին ուսումնասիրվող հարցի շրջանակներում չենք քննարկի: Այդ հարցը բավականին խորքային է և ունի բազմաթիվ հիմնավորումներ: Սակայն ուսուցչի խնդիրն այն է, որ ստեղծի պայմաններ, ընթերցանության անհրաժեշտ միջավայր, մոտիվացիա, ցանկություն ընթերցելու և ընթերցածը քննարկելու: Քառասունամյա մանկավարժական գործունեությանս ընթացքում սովորողների մոտ ընթերցանության հանդեպ հետաքրքրության բարձրացմանը նպաստող բազմաթիվ միջոցների եմ դիմել: Փորձել եմ ինքս առաջարկել գրքեր, հեղինակներ, ժանրեր, փորձել եմ ընտրել ինչպես սովորողների առաջարկած գրականության , այնպես էլ արտադասարանական ընթերցանության համար նախատեսված գրականության ցանկից՝ հեշտ ու հարմարեցված, բարդ բնօրինակներ, թարգմանություններ, արձակ, պոեզիա: Սակայն հաճախ ստիպված եմ եղել դադարեցնել իմ միջամտությունները,քանի որ առանց պարտադրանքի գործը առաջ չէր գնում. հատուկենտ ընթերցասեր սովորողներ էին ներգրավվում գործընթացի մեջ:Այդ պատճառով վերանայեցի ընթերցանության կազմակերպման գործընթացի նկատմամբ իմ մոտեցումները:

Ինններորդ դասարանցիների հետ տարվա սկզբից մի նախագիծ սկսեցի,որը անվանեցի ,,Տնային ընթերցանություն - Դասարանական քննարկում,,: Սովորողների համար նախապես ընտրում էի հայ կամ արտասահմանյան որևէ հեղինակի ոչ ծավալուն ստեղծագործություն (սովորողները իրենք էլ հնարավորություն ունեին առաջարկել ընթերցանության նյութ): Միաժամանակ իմ կողմից մշակվում էր հարցաշար, որին պատասխանելու համար սովորողը պետք է մանրամասն ծանոթ լինի նյութի հետ: Հարցերը հիմնականում տրամաբանական էին ու այնպիսին, որ դասարանում այդ հարցերի շուրջ հնարավոր լիներ ծավալել քննարկում և բանավեճ: Հարցեր կային նաև բառապաշարի վերաբերյալ. սովորողներին տրվում էր առաջադրանք՝ դուրս գրել անծանոթ բառերը, գտնել դրանց հոմանիշներն ու հականիշները և դրանք գործածել նախադասությունների մեջ՝ դրանով նպաստելով բանավոր խոսքի զարգացմանը:

Սակայն ընթերցանության այս գործընթացը իրականացնելիս բախվում էինք մի կարևոր խնդրի.

7-9-րդ դասարանների ուսումնական ծրագրերում արտադասարանական ընթերցանության համար առանձին դասաժամեր հատկացված չեն՝ ի տարբերություն 5-6-րդ դասարանների,որը կցանկանայի՝ վերանայվեր նոր առարկայական չափորոշիչներում և ծրագրերում: Ուստի քննարկումները կազմակերպել և կազմակերպում ենք դասապրոցեսից դուրս:

§4 **Ընթերցանության խթանման արտասահմանյան երկրների լավագույն փորձից**

Ժամանակակից զարգացող հասարակության մեջ ավելի ու ավելի դժվար է դարձել երեխային ստիպել գիրք կարդալ, իսկ գիրք կարդալը անձի զարգացման գործում անփոխարինելի է եղել ու մնում է այդպիսին: Արագորեն փոփոխվող աշխարհը արագորեն էլ դառնում է վիրտուալ: Ուստի պիտի փոխվեն ընթերցանության խթանման ձևերն ու մեթոդները՝ դրանք համապատասխանեցնելով ժամանակի պահանջներին: Ստորև ներկայացնում ենք սովորողների շրջանում ընթերցանության խթանման Եվրոպական և Արևելյան գործընկերության երկրների լավագույն փորձը, որոնք իրարից տարբերվում են թե՛ ձևով և՛ թե բովանդակությամբ:

§4.1. **ՊՐԵՄԻԵՐ ԼԻԳԱ. ԸՆԹԵՐՑՈՂ ԱՍՏՂԵՐ**

/National Literacu Trust (Ազգային գրագիտության դաշինք) (Միացյալ Թագավորություն) /

,,Պրեմիեր լիգայի ընթերցող աստղերը,, National Literacu Trust - ի և Պրեմիեր լիգայի համատեղ նախագիծն է: Սա ընթերցանության խթանման ծրագիր է, որը հասցեագրված է երեխաներին ու երիտասարդներին, որոնք դեռևս ընթերցանության երկրպագուներ չեն և տարված են ֆուտբոլով: 2012թվականից հազարավոր դպրոցներ և գրադարաններ են ներգրավվել նախագծում: ,,Պրեմիեր լիգայի ընթերցող աստղեր ծրագիրը,, դպրոցներին օգնում է ներգրավվել աշակերտներին,որոնք ունեն գրագիտության ցածր մակարդակ և կարծում են, թե ընթերցանությունը ուրիշների համար է : Ծրագիրը բավականին ճկուն է, ուստի կարող է օգտագործվել թե՛ տարրական և թե՛ ավագ դպրոցներում: Այն հատկապես հաջողություն է ունենում գրագիտության հանդեպ տղաների վերաբերմունքը փոխելու հարցում և գրավում է նրանց ուշադրությունը, ովքեր ֆուտբոլ են սիրում: Ծրագիրը մասնակցության հնարավորություն է տալիս նաև ծնողներին և օգտակար է նրանց համար: Նրանց մասնակցությունը օգնում է ավելացնել սեփական ինքնավստահությունը, ինչպես նաև մղում է կատարելագործել հմտությունները և ավելի շատ հետաքրքրվել իրենց երեխաների ընթերցողական սովորություններով:[4]

§4.2. Գրքերն ավտոբուսներում տարածում են ընթերցանությունը Միդդլսբրոյում

<<Արրիվա Նորթ Իսթ Trust (Միացյալ Թագավորություն)/

<<Արրիվա Նորթ Իսթ>> ավտոբուսների ընկերության, Ազգային գրագիտության դաշինքի և Միդդլսբրոյի խորհրդի համատեղ նախագիծն է: Տարածքում ընթերցողների թիվն ավելացնելու նպատակով <<Արիվա Նորթ Իսթ>> ընկերությունը անվճար մանական գրքեր է բաժանել իր 27-րդ ծառայության ավտոբուսներում: Նվիրաբերել է 15000 մանկական գիրք, և ընտանիքները կարողացել են անվճար գիրք ստանալ երկու տարբեր երթուղիների ավտոբուսներում, որոնք անցնում են Միդդլսբրոյի ամենաաղքատ շրջաններով և կատարում են շաբաթական ավելի քան 22400 ուղևորություն: Ընտանիքները կարդում են գրքերը ավտոբուսով ուղևորության ընթացքում և իրենց հետ տուն տանում: Մինչև օրս 9000 ընտանիք անվճար գիրք է տարել տուն: Տեղաբնակ Սիլվիան՝ վեցամյա Լիլիի ու Թովմասի մեծ տատիկը, ասում է. <<Իմ կարծիքով՝ իսկապես ցնցող գաղափար է. երեխաները զբաղմունք են ունենում ավտոբուսում, կարող են կարդալ նաև տանը: Ես վերցրի Մայքլ Մորպուրգոյիի

[4] :http://www.literacytrust.org.uk/premier_league_reading_stars

գրքի օրինակը, ու նրանց դուր եկավ: Դադարեցին հեռուստացույցով մուլտեր դիտել, փոխարենը կարդում են: Նրանք իրար հետ խոսում էին նկարների մասին. շատ հաճելի էր>>:[5]

§4.3. Մանկական գրականության ավտոբուս՝ տպավորիչ տոն գրքերի հետ

/Բազելի գրադարանային հիմնադրամ (Շվեյցարիա)/

Ամբողջ տարի գրքերով և խաղալիքներով լի ավտոբուսը այցելում է թաղամասի գրադարաններ և կենտրոններ, խաղահրապարակներ, զբոսայգիներ և հանրային լողավազաններ: Ընթերցանության հմուտ անիմատորները մինչև տասներկու տարեկան երեխաների համար կազմակերպում են հատուկ և հետաքրքիր հանդիպումներ գրքերի հետ: Սկսնակ փոքրիկ ընթերցողներն իրենց առաջին գրական փորձը ձեռք են բերում բանաստեղծությունների և պատմվածքների միջոցով: Նախադպրոցական երեխաները իմանում են ամենատարբեր երևույթների մասին՝ նկարներից մինչև աուդիո-գրքեր: Դպրոցական երեխաները հանդիպում են «Գրքախմբում» և խորասուզվում գրքերի աշխարհում: Ամեն տարի մոտավորապես 800 արշավի ընթացքում մանկական գրականությամբ ավտոբուսները հասնում են 6000 մարդու:[6]

§4.4. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԸՆԹԵՐՑԵԼՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՇԱԲԱԹ /ABCXXI հիմնադրամ (Լեհաստան)/

Երեխաների համար ընթերցանության ազգային շաբաթը («Ամբողջ Հոլանդիան կարդում է երեխաների համար» ազգային հասարակական արշավի շրջանակներում) նպատակ ուներ դաստիարակել ընթերցողներ՝ կրթված, մշակութային ու խելացի մարդիկ, վաղ մանկությունից ամեն օր երեխաների համար տանը, մանկապարտեզներում և դպրոցներում բարձրաձայն կարդալու միջոցով: Ծրագիրը երիտասարդ սերնդի կրթության համար պատասխանատու բոլոր մարդկանց, հասարակական կազմակերպություններին ու հաստատություններին կոչ է անում ներկայացնել և իրականացնել երեխաների և դեռահասների համար ամենօրյա բարձրաձայն ընթերցանությանը աջակցելու ծրագիր՝ ընթերցել ամեն օր, օրական 20

[5] https://www.arrivabus.co.uk/north-east/Lukas-Jutkiewicz-launches-book-campaign/
[6] http://www.spendenfondslesen.ch/index.php?id=18&L=1

րոպե: Երեխաների համար ընթերցանության ազգային շաբաթը կազմակերպվում է 2002 թվականից: Ամեն տարի ABCXXI հիմնադրամը հավաքագրում է կամավորների (առաջնորդներ և կոորդինատորներ) և տրամադրում մեծ քանակով գովազդային նյութեր՝ազդագրեր, գրքույկներ, էջանիշներ, ավելի քան 4500 վայրերի նկարներով կպչուն սթիքերներ: Մեկ շաբաթվա ընթացքում ծնողների, ուսուցիչների, գրադարանավարների, արտիստների, իշխանության ներկայացուցիչների, լրատվամիջոցների ու եկեղեցու կողմից ողջ երկրում կազմակերպվում են հազարավոր միջոցառումներ՝ գրական հերոսների շքերթներ, մրցույթներ, ներկայացումներ և հանրային ընթերցումներ: 2011 թվականին «Յուրաքանչյուր չեխ ընթերցում է երեխաների համար» չեխական հիմնադրամի հետ համատեղ ստեղծվել է Երեխաների համար ընթերցանության առաջին միջազգային շաբաթը[7]:

§ 4.5.ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՎ ԴԻՏՈՒՄ ԱԳՐԱՖԿԱՅՈՒՄ /«ԿինոԱգրաֆկա» (Լեհաստան)/

Հանդիպումների շարք է, որի ընթացքում անիմատորը գրքից մի պարբերություն է կարդում, ապա դրան հաջորդում է գրքի մշակման կամ գրքին շատ մոտ թեմայի հիման վրա ֆիլմի ցուցադրություն: Առաջադեմ մուլտիպլիկատորների ստեղծած մուլտֆիլմերն ամենից հաճախ են ներկայացվում: Մանկական գրականության գրադարանը՝ «Փոքր մարդու գրադարանը», նույնպես գործում է Ագրաֆկայում: Նախագիծը նախատեսված է ամենափոքր ընթերցողների համար: Ընթերցումից և դիտումից հետո երեխաներին հրավիրում են ստուդիա, որտեղ նրանք գույների ու ձևերի օգնությամբ կարող են արտահայտել իրենց տպավորությունները ֆիլմից և գրքից: Սա զարգացնում է նրանց երևակայությունը: Երեխաների հետ աշխատանքի փորձ ունեցող մասնագետները հրավիրվում են մասնակցելու այս նախագծին: Ծրագիրն առաջարկում է լեհ և արտասահմանցի հեղինակների ամենահետաքրքիր գրքերը: Սա նաև լավ հնարավորություն է, որպեսզի ծնողները հիշեն մանկության իրենց սիրելի հեքիաթներն ու մուլտֆիլմերը:[8]

§4.6. ԿԼԱՆԵՆՔ ԳՐՔԵՐԸ ՀԵՓՓԻ ՄԻԼՈՒՄ /ՄաքԴոնալդս, Շթիֆթունգ Լեսեն (Գերմանիա)/

ՄաքԴոնալդս ընկերությունը, «Shtiftung Lesen» գերմանական ընթերցանության հիմնադրամի հետ համատեղ, նպատակ ունի հայտնի Հեփփի Միլսում դրվող խաղալիքները փոխարինել գրքերով՝ այդպիսով մասնակցելով մանուկների

[7] http://www.allofpolandreadstokids.org/
[8] http://www.kinoagrafka.pl/czio.html

գրագիտությունը խթանելու ջանքերին: Առաջարկվող բոլոր գրքերը բարձրորակ են: «Stiftung Lesen» հիմնադրամը կատարել է այնպիսի ընտրություն, որպեսզի գրքերը հարմար լինեն որոշակի տարիքի երեխաների համար: Ծնողները կարող են գիրք ընտրել՝ ըստ իրենց ցանկության: Ընդգրկված են թե' գեղարվեստական, թե' ոչ գեղարվեստական գրքեր: Որոշ գրքեր հարմար են փոքրիկների համար բարձրաձայն ընթերցելուն, մյուսները նախատեսված են ավելի մեծ երեխաների ինքնուրույն ընթերցանության համար: Զգալի թվով գրքեր գտել են իրենց հասցեատիրոջը: 2012 թվականի արշավի ընթացքում Գերմանիայում չորս միլիոն գիրք է հայտնվել այն ընտանիքներում, որոնք ունեն հինգից տասը տարեկան երեխաներ: Նմանատիպ արշավն ամենապարզ միջոցն է՝ հասնելու այն ընտանիքների երեխաներին, որտեղ չեն գնահատում գիրքն ու ընթերցանությունն այնքան, որքան անհրաժեշտ է, որպեսզի երեխաները ձեռք բերեն գործառական ընթերցողական հմտություններ:[9]

§4.7. ՍՓՈՈՒՔՍ /Կրթական նվիրաբերությունների հիմնադրամ (Միացյալ Թագավորություն)/

ՍՓՈՈՒՔՍԸ (Աջակցություն ծնողներին՝ երեխաների կրթության հարցում) նախագիծ է, որի նպատակն է՝ ծնողներին փոխանցել այն հմտությունները, որոնք անհրաժեշտ են երեխաներին կարդալ սովորեցնելու գործում: Ծնողները 12 անգամ, շաբաթական մեկ օր հաճախում են նիստերի, որտեղ մանկավարժ-հոգեբաններն ու ծնողների աջակցության աշխատակիցները նրանց ցույց են տալիս այն պարզ կրթական ռազմավարությունը, որն օգտագործվում է երեխաների հետ ընթերցելու ժամանակ: Այս երկու հիմնական ուսուցանվող մեթոդներն են՝ «Կանգ առ, Հուշիր, Գովիր» և «ընդհանուր լեզվական» մոտեցում ընթերցանությանը: «Կանգ առ, Հուշիր, Գովիր» մոտեցման դեպքում ծնողներին ցույց են տալիս՝ ինչպես պատասխանել, երբ նրանց երեխան չի ճանաչում որևէ բառ: Ընդհանուր լեզվական մոտեցումը ծնողներին խրախուսում է քննարկել գրքերն իրենց երեխայի հետ, այլ ոչ թե ավարտելուց հետո ուղղակի մի կողմ դնել դրանք:[10]

§4.8.ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԲԵՐԿՐԱՆՔ «Ուրախ ժամանց» /GGG Հանրային գրադարան (Շվեյցարիա)/

2002 թվականից ի վեր ամեն ամառ և ձմեռ GGG հանրային գրադարանը խթանում է հատուկ նախագծեր, որոնց նպատակն է՝ դպրոցականների մեջ սերմանել ընթերցելու

[9] https://www.stiftunglesen.de/initiativen-und-aktionen/aktionen/buchaktion

[10] http://educationendowmentfoundation.org.uk/projects/spokes/

ցանկություն: Ձմռանը՝ «Բացահայտենք Բազելի գրադարանները» նշանաբանի ներքո երեխաներն այցելում են Բազելի և Ռիհենի գրադարաններ: Գրադարաններից յուրաքանչյուրում նրանց սպասում են հետաքրքրաշարժ գլուխկոտրուկներ, որոնք պետք է լուծել: Այս խաղերի միջոցով նրանց են ներկայացվում գրադարանի գանձերը: Ովքեր լուծում են բոլոր գլուխկոտրուկները, կարող են մասնակցել նկարչական նախագծի՝ գրավիչ մրցանակներով: Ամառային «Ուրախ ժամանցը» խրախուսում է օրվա ցանկացած հնարավոր պահի 15 րոպե ընթերցանությունը: Նրանք կարող են այս «ընթերցանության օրն» ավելացնել իրենց անձնական ընթերցանության միջոցառումների գրքույկում: Նրանք, ովքեր բավական հաճախ են կարդում, մասնակցում են նաև նկարչական միջոցառման: Դասարանները նույնպես կարող են մասնակցել այս մրցույթներին և փոքր հաջողության դեպքում գումար «վաստակել» իրենց դասարանի գրքերի հավաքածուի համար:[11]

§4.9. WWW ԱՐՇԱՎ /Վրոկլավի քաղաքային հանրային գրադարան (Լեհաստան)/

"www" նախագիծը (Արի. Վերցրու. Հանգստացիր) նախատեսված է պատանիների համար: Պատանիների շրջանում ընթերցանության խթանումն օգտակար է, քանի որ ամենադժվար աշխատանքը այս խմբի հետ է: Նախագծի շրջանակներում ստեղծվել է պատանիների ոճով արված մեծ քանակությամբ տպագիր նյութ, որոնցից են՝մշակութային միջոցառումների հրավիրատոմսեր, էջանիշներ դեռահասների համար, «Գիտե±ք, թե որտեղ է ձեր գրադարանը» վերնագրով քարտեզ: Երեխաները գնահատել են իրենց կարդացած գրքերը՝ ամրացնելով «HIT. OK. KIT» նամականիշեր: Ավելի ուշ գրադարանավարները մշակել են այս պատասխանները և հաշվի առել դրանք հետագայում դեռահասների համար գրքեր գնելիս: «Երիտասարդություն» հատուկ ինտերնետային էջը նույնպես ստեղծվել է պատանիների համար: Այնտեղ նրանք կարող են հետաքրքիր տեղեկատվություն գտնել գրքերի և գրադարանի միջոցառումների մասին: Բացի այդ, կազմակերպվել է միջոցառումների շարք պատանիների համար: Դրանցից են աուդիո-գրքի ձայնագրությունը, գրաքննադատության սեմինարները, երաժշտական ծրագրերի նախապատրաստումը և այլն:[12]

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ

[11] http://www.spendenfondslesen.ch/

[12] http://www.biblioteka.wroc.pl/mlodziez/projekty/kampania-www-wstap-wypozycz-wyluzuj

§4.10. «Անտարես» հրատարակչությունը և www.dasaran.am կայք

«Անտարես» հրատարակչությունը և www.dasaran.am կայքի հետ իրականացնում է «Ընթերցման օլիմպիադա» 6րդ դասարանի աշակերտների համար: Մրցույթի հիմքում ընկած է «Ընթերցանության մրցույթի» գերմանական մոդելը, որը 1946-ից անցկացվում է Գերմանիայի Դաշնությունում, և գերմանացի մասնագետների համոզմամբ մրցույթի այս ձևով անցկացումը լուրջ և կարևորագույն ազդակ է հանրությանը գրքի հետ կապելու գործում: Նպատակ է դրված «Ընթերցման օլիմպիադայի» միջոցով աշակերտների մոտ բարձրացնել ընթերցանության կարևորությունը՝ ընդհուպ այն աստիճանի, որ 6-րդ դասարանի պատանին իր գիտելիքի շնորհիվ կարողանա դպրոցի և շրջապատի համար դառնալ հերոս: Մրցույթի քաղաքային, մարզային և հանրապետական փուլերում
հաղթած աշակերտների դպրոցները արժանանում են մրցանակների, մասնավորապես դպրոցական գրադարանները համալրվում են նոր գրքերով: Մասնակիցները և նրանց ընտանիքները նույնպես արժանանում են բազմապիսի մրցանակների մրցույթի հովանավորների կողմից, որոնց ցանկը տարեցտարի ընդլայնվում է:

Բացի «Անտարես» հրատարակչության կողմից կամակերպվող ամենամյա «Ընթերցման օլիմպիադա» 6րդ դասարանի աշակերտների համար ծրագրից՝ Հայաստանում գործում են ընթերցանության խթանման հետևյալ ծրագրերը՝ <<Գիրք նվիրելու օր>> /Ամենայն հայոց բանաստեղծի՝ Հ. Թումանյանի ծննդյան օրը՝ փետրվարի 19/, <<Երևանյան գրքի փառատոն>>, <<Գրքի գիշեր>>, <<Զանգակի ամառային ընթերցանություն>> և <<Արի կարդանք>>:

Ինձ առանձնապես ոգևորեց ամերիկյան մի ծրագիր, որը կոչվում է <<Մի գիրք, մի քաղաք>>, որի շրջանակներում ամբողջ քաղաքը որոշակի ժամանակահատվածում ընդամենը մեկ գիրք է կարդում, քննարկում, բանավիճում դրա շուրջ:

Օրինակներ իմ փորձառությունից

Ինչպես արդեն նշել ենք, ընթերցանությունը խթանող լավագույն միջոցառումներից է ,,Գիրք նվիրելու օրը,,, որը ամեն տարի յուրահատուկ

տոնախմբության է վերածվում իմ պարապած չորս դասարաններում, ուր սովորում է գրեթե 132 աշակերտ:

Տոնին պատրաստվում ենք մեծ ուրախությամբ և ջերմեռանդությամբ: Մի կողմից նվեր ստանալու, մյուս կողմից նվիրելու հաճելի զգացողությունները միախառնվում են իրար:

Պայմանը հետևյալն է. դասարանի բոլոր սովորողները ձեռք են բերում իրենց նախընտրած գիրքը: Նվիրող աշակերտը առաջինը ինքը պետք է կարդա այն և համապատասխան գրառումներ անի: Այսպիսով՝ դասարանի բոլոր 34 աշակերտներն էլ կարդում են մեկական գիրք, որից հետո դրանք նվիրում են իրենց համադասարանցիներին վիճակահանության սկզբունքով: Գրքերը փոխանակելուց հետո սահմանում եմ որոշակի ժամանակահատված՝ երկու ամիս: Ժամանակը լրանալուց հետո թեստային աշխատանքների միջոցով ստուգում եմ, թե արդյոք բոլոր աշակերտներն են կարդացել ինչպես իրենց նվիրած, այնպես էլ նվեր ստացած գրքերը:

Թեստը ընդգրկում է հետևյալ հարցերը.

1.Ո՞ր գիրքն ես կարդացել, ո՞վ է հեղինակը:

2.5-6 նախադասությամբ համառոտ ներկայացրու գրքի բովանդակությունը:

3.Թվարկի՛ր կարդացածդ գրքի դրական և բացասական հերոսներին:

4.Ո՞ր հերոսը քեզ դուր եկավ, ինչու՞:

5.Ի՞նչ զգացիր, ի՞նչ պատկերներ տեսար գիրքը ընթերցելիս:

6.Ի՞նչ տվեց քեզ նոր գրքի ընթերցանությունը, ի՞նչ նոր բառեր սովորեցիր:

Թեստը լրացնելուց հետո հանձնարարում եմ զույգերով քննարկել իրենց կարդացած գրքերը: Արդյունքում դասարանի յուրաքանչյուր աշակերտ ընթերցում է 2-ական գիրք:

Ընթերցանությանը խթանող արդյունավետ միջոց է ,,Անտարես,, հրատարակչության և WWW.dasaran.am կայքի կողմից իրականացվող ,,Ընթերցման օլիմպիադան,, 6-րդ դասարանի աշակերտների համար:

Դասարանում նախօրոք հայտարարում եմ, որ պետք է պատրաստվել ընթերցման օլիմպիադային, որին կմասնակցեն այն աշակերտները, որոնք կկարդան որևէ գեղարվեստական գիրք(հիմնականում ուղղորդում եմ նրանց, քանի որ ուզում եմ,որ այն նպատակային լինի), ապա նրանց նույնպես հանձնարարում եմ լրացնել վերևում նշված թեստը: Այնուհետև հանձնարարում եմ ընտրել մի հատված և ընթերցել այն/ մոտ 10 տող/: Ընթերցանությունը պետք է սահուն լինի, արտահայտիչ և ճիշտ շեշտադրությամբ: Ընթերցվող հաջորդ հատվածը /արդեն անծանոթ բնագրից/

առաջարկում եմ ես: Լավագույն ընթերցողներին որոշում ենք միասին՝ հաշվի առնելով նաև աշակերտների կարծիքները: Հաղթող աշակերտները մասնակցում են դպրոցական փուլին, իսկ այդ փուլի հաղթող երկու աշակերտ՝ մարզային փուլին: Արդյունքում ոգևորությունն այնքան մեծ է լինում, որ դասարանի աշակերտների մոտ 80%-ը մասնակցում է ընթերցման օլիմպիադային:

9-րդ դասարանում ,,Գրականություն,, առարկայի դասավանդման դժվարություններից մեկն էլ այն է, ոչ բոլոր աշակերտներն են ընթերցում ծրագրով պահանջվող ընթերցանության նյութերը: Այսպես՝ կարելի է փաստել , որ սովորողների 80%-ը չի ընթերցում ծրագրային ստեղծագործությունները: Նրանց մի մասը պատճառաբանում է,որ ժամանակը չի բավարարում ընթերցելու համար, մյուս մասն էլ պատճառաբանում է, որ պարտադիր ընթերցանության համար նախատեսված ստեղծագործությունների լեզուն խրթին է, անհասկանալի,ինչպես օրինակ՝ Խ.Աբովյանի ,,Վերք Հայաստանի,, կամ ,,Սասունցի Դավիթ,, էպոսի լեզուն, հատկապես մատնանշելով արևմտահայ գրողների ստեղծագործությունների լեզվական դժվարությունները:

,,Սասունցի Դավիթ,, էպոսի ուսուցման օրինակի հիման վրա ներկայացնեմ, թե ինչպես եմ հաղթահարում դժվարությունները: Ինչպես գիտենք, էպոսը գրված է Սասունի բարբառով, որն էլ ինչ-որ չափով անհասկանալի է սովորողին: Ի՞նչ անել: Թեմայի ուսումնասիրման հանար նախատեսված առաջին դասաժամին ներկայացնում եմ էպոսի ստեղծման ժամանակաշրջանը,կառուցվածքը, գաղափարական բովանդակությունը, պատմում եմ էպոսի սկզբնամասի սյուժեն՝ խթանալով նրանց հետաքրքրությունը: Լսում ենք նաև տեսաձայնագրություններ՝ ասմունքի վարպետների կատարմամբ: Այնուհետև դասարանը բաժանում եմ 4 խմբի և պահանջում յուրաքանչյու խմբից ընթերցել էպոսի մեկական ճյուղ: Այսպես՝

1-ին խումբ՝ ,,Սանասար և Բաղդասար,,

2-րդ խումբ՝ ,,Մեծ Մհեր,,

3-րդ խումբ՝ ,,Սասունցի Դավիթ,,

4-րդ խումբ՝ ,,Փոքր Մհեր,,

Քանի որ էպոսի ուսումնասիրման համար, ըստ թեմատիկ պլանի, հատկացված է 12 դասաժամ, ուստի վերջին չորս դասաժամերին աշակերտները խմբերով ներկայացնում են էպոսի ճյուղերը պաստառներով,դերային խաղերով՝ միաժամանակ պատմելով նաև սյուժեն:Պարտադիր պայմանն այն է, որ խմբի բոլոր անդամները պետք է անձամբ ընթերցեն իրենց հանձնարարված ճյուղը: Երբ խմբերը լսում են միմյանց, սկսվում է ակտիվ բանավեճ, որի ընթացքում ինձ հաջողվում է սովորողների

մեջ սեր արթնացնել դեպի հայկական ժողովրդական էպոսը, իսկ հետո աշակերտների մի մասը իրենք են որոշում կարդալ էպոսը, լրացնել այն բացը, որը մնացել էր իրենց խմբային համագործակցության և բանավեճի արդյունքում:

Ուսումնասիրելով արտասահմանյան փորձառությունից ընթերցանությունը զարգացնող օրինակները՝ դրանք կօրառելու իմ մանկավարժական գործունեության հետագա տարիների ընթացքում:

Եզրակացություն

Ընթերցանությունը ոչ միայն հաճելի ժամանց է, այլ ամենակարևորը՝ միտքը զարգացնելու գործիք: Շատ կարևոր է վաղ տարիքից ընթերցելու հանգամանքը: Ընթերցանության ճիշտ կազմակերպման դեպքում սովորողի մոտ կձևավորվի լսելու, կենտրոնանալու, մտածելու, սեփական մտքերը ազատ արտահայտելու կարողություն, կձևավորվի գրագետ խոսք, կզարգանա բանավոր խոսքը, ինչպես նաև սահուն ու արտահայտիչ ընթերցելու կարողությունը:

Այսպիսով, եթե ցանկանում ենք՝ երեխան դառնա ընթերցասեր, առաջարկում եմ՝

1.նրա ինքնուրույն ընթերցման համար ստեղծել հարմար միջավայր.
2.ընթերցանությունը դիտարկել որպես կրթության բարելավման գործիք ու այն օգտագործել իբրև կրթական բարեփոխումների հիմնասյուն.

3.ընթերցանության ժամանակ կիրառել ուսուցման ժամանակակից վերոնշյալ մեթոդները.

4.կազմակերպել նպատակային բանավեճեր և գրքի քննարկումներ.

5.կիրառել ընթերցանության խթանման ինչպես հայաստանյան, այնպես էլ արտասահմանյան երկրների լավագույն փորձը.

5.ճիշտ և հետաքրքիր կազմակերպել տնային, ինչպես նաև արտադասարանական ըմթերցանությունը և հասնել նրան, որ սովորողի մոտ սեր ու հարգանք արթնանա գրքի ու ընթերցանության նկատմամբ:

Օգտագործած գրականություն

1.Վ.Լ.Վորոնցով , Բանականության սիմֆոնիա, Երևան, 1981

2.,,Հայոց լեզու և գրականություն,, ամսագիր 3-4.2002

3.,,Կրթություն,, շաբաթաթերթ 15 հուլիսի,2017

4.Լև Վիգոտսկի, Պատմամշակութային հոգեբանություն, Ազատ հանրագիտարան

5.ԿՏԱԿ, 2017-2018 ուստարվա պահոց

6.ԿՏԱԿ, 2018-2019 ուստարվա պահոց

7. Ուսուցչի օրագիր

8.Ուսուցչի գրադարան

9.Այդան Չեմբերս, Պատմել, Ընթերցանություն

10.Դավիթ Գյուրջինյան, Թամար Ալեքսանյան, Աշոտ Գալստյան, Մայրենի, Ուսուցչի ձեռնարկ 5-6, Երևան,2011

URL;:http://www.literacytrust.org.uk/premier_league_reading_stars
https://www.arrivabus.co.uk/north-east/Lukas-Jutkiewicz-launches-book-campaign/
http://www.spendenfondslesen.ch/index.php?id=18&L=1
http://www.allofpolandreadstokids.org/
http://www.kinoagrafka.pl/czio.html
https://www.stiftunglesen.de/initiativen-und-aktionen/aktionen/buchaktion
http://educationendowmentfoundation.org.uk/projects/spokes/
http://www.spendenfondslesen.ch/
http://www.biblioteka.wroc.pl/mlodziez/projekty/kampania-www-wstap-wypozycz-wyluzuj